

Տեղեկատվություն Արագածոտնի մարզում առաջնահերթ լուծում պահանջվող խնդիրների լուծման ուղղությամբ ՀՀ Կառավարության կողմից 2016թ ընթացքում իրականացված ծրագրի մասին

ՀՀ Արագածոտնի մարզի առաջնահերթ լուծում պահանջվող խնդիրների լուծման ուղղությամբ ՀՀ Կառավարության կողմից 2016թ ընթացքում մարզին հատկացվել է 197998,5 հազար դրամ գումար:

Այդ թվում՝ կարկտահարությունից տուժված բնակիչներին ոռոգման ջրի պարտքերի մարման համար հատկացվել է աջակցություն՝ 175453,5 հազար դրամ գումար, որն էլ սահմանված կարգով ամբողջությամբ տրվել է 19 համայնքի/ Աշտարակ, Փարպի, ՈՒշի, Օհանավան, Կարբի, Արտաշավան, Ագարակ, Արագածոտն, Բազմաղբյուր, Ն.Եղեցիա, Կոշ, Բյուրական, Սասունիկ, Օշական, Ուջան, Աղծք, Ոսկեվազ, Ոսկեհատ, Հարթավան/ ոռոգման ջուր սպասարկող՝ 5 ջուր օգտագործող ընկերություններին:

Հեղեղի և քամու վնասները հատուցելու համար հատկացվել է 22545,0 հազար դրամ գումար, որն էլ սահմանված կարգով հատկացվել է մարզի 1 համայնքի /Արագածոտն/ տանիքների վերանորոգման համար նյութեր ձեռք բերելու նպատակով, 4 համայնքում/ Աշտարակ, Սասունիկ, Օհանավան, Կարբի/ հակակարկտային կայաններ տեղադրելու համար, իսկ 3 համայնքում /Արագածոտն, Աղծք, Ոսկեվազ/ դրամական օգնությամբ օժանդակելու համար:

Նախատեսված ծրագրերն 2016թ ընթացքում ավարտվել են: